ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՊԿ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մարտի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության անդամ պետությունների թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը հակազդելու ուղղությամբ իրավասու մարմինների ղեկավարների Կոորդինացիոն խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ ՀՀ Ոստիկանապետ գեներալ-լեյտենանտ Հայկ Հարությունյանի:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետը նախ ներկայացրեց համայն հայության հոգևոր կենտրոնի պատմությունը և առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: «Ուրախալի է մեզ համար տեսնել, որ այսպիսի համագործակցություն է առկա հատկապես թմրամոլության դեմ պայքարում, որը, անշուշտ, նաև մեր մտահոգությունն է: Եվ մեր եկեղեցականներն էլ, բնականաբար, իրենց համապատասխան քարոզչությունն են իրականացնում, որպեսզի այդ ախտը տարածում չգտնի, իսկ եթե անձեր կան, որոնք այդ մոլորության ճիրանների մեջ են, կարողանան ձերբազատվել դրանից: Յուրաքանչյուր մոլություն եկեղեցական ընկալումով մեղք է, առավելաբար թմրամոլությունը, որն ուղղված է Աստծո պատկերը կրող մարդու բանականության, մտածողության բնական ընթացքի խաթարմանը»,- ասաց Նորին Սրբությունը:

Կոորդինացիոն խորհրդի անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջունեց և կատարված աշխատանքների արդյունքերն ու ծրագրերը ներկայացրեց Թմրամիջոցների դեմ պայքարի կենտրոնի նախագահ, ՌԴ թմրամիջոցների շրջանառությունը վերահսկող Դաշնային ծառայության տնօրեն գեներալ Վիկտոր Չերկեսովը: «Մենք պարտավոր ենք զբաղվել մարդկանց փրկությամբ»,- նշեց Վ. Չերկեսովը՝ կարևորությամբ ընդգծելով, որ իրավապահ մարմինները համագործակցում են քաղաքացիական տարբեր կառույցների ու կրոնական հարանվանությունների հետ՝ պաշտպանելու մարդկանց այդ վնասակար երևույթից և կանխելու թմրամիջոցների կիրառումը և շրջանառության աճը: ՌԴ թմրամիջոցների շրջանառությունը վերահսկող Դաշնային ծառայության տնօրենը Նորին Սրբությանը ներկայացրեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ այդ ոլորտում իրականացվող համագործակցությունը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴՈՐՏՄՈՒՆԴՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Մարտի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Դորտմունդյան կոնֆերանսի՝ Լեռ-

նային Ղարաբաղի հարցով աշխատանքային խմբի համանախագահներ ռուս քաղաքագետ, «Ստրատեգիական հետազոտությունների կենտրոնի» ներկայացուցիչ Վիտալի Նաումկինին և Շարունակական երկխոսության միջազգային ինստիտուտի նախագահ Հարոլդ Սանդերսին՝ ուղեկցությամբ խմբի հայաստանյան կողմի ներկայացուցիչների:

Հանդիպմանը երկու համանախագահները Նորին Սրբությանը ներկայացրեցին Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման առնչությամբ իրենց տեսակետները՝ նշելով, որ խնդրի լուծման գործընթացում հանրության և հասարակական տարբեր կառույցների ներգրավվումը, հասարակական քննարկումներն ու երկխոսությունները կարող են մեծապես նպաստել խաղաղության վերահաստատմանը:

Գարեգին Բ Վեհափառն անդրադարձավ խնդրի կարգավորման գործում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելությանը և Ադրբեջանի հոգևոր առաջնորդի հետ Հայ Եկեղեցու հովվապետերի հանդիպումներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ